//

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -142-2023
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «14» «03» 2023 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն), ի դեմս կազմակերպության նախագահ Հ. Խաչատրյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1056. «Կինեմատոգրաֆիայի ծրագիր» ծրագրի «11005. Կինոարվեստի հանրահռչակում» միջոցառման (տող՝ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոն») (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում կազմակերպել «Ոսկե ծիրան» միջազգային 20-րդ կինոփառատոնի իրականացումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով կամ սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային) կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար, իսկ բովանդակայինը՝ ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման և ընթացքի մասին, այդ թվում արդյունքների գնահատումը, մասնակիցների քանակը, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով,

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. հրապարակել պետական մարմնի անունը, իսկ համաֆինանսավորման դեպքում տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության, ֆինանսավորման չափի և վերջինիս հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5,0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2023 թվականի դեկտեմբերի 22-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 45000.0 հազար (քառասունհինգ միլիոն) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 2-ի:

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարի 80 %-ը կազմակերպությանը հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցին համապատասխան՝ համաձայն Հավելված N 5-ի, իսկ 20 %-ը՝ սույն պայմանագրի 5.1-ին կետով նախատեսված հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

3.3. Համաձայն «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 22-րդ կետի՝ հաշվարկված ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հատկացումները չեն կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարները 2023 թվականի ընթացքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական բյուջե:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2023 թ. սեպտեմբերի 1-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացուցային օրը:

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը: Սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2023 թվականի մարտի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար: Ընդ որում, տուգանքի վճարումը կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից:

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի

չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար՝ սույն պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:
6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:
6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:
6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին:
6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում:
6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:
7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:
7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:
7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:
7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք

անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3 Կառավարական տուն 2 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732 Գլխավոր քարտուղար Հ. Հակոբյան (ստորագրություն) Կ.Տ.	«Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ ք. Երևան, Բայրոնի 5 «Ամերիաբանկ» ՓԲԸ ՀՀ 1570018400480100 ՀՎՀՀ 01556218 Հեռ՝010-52-10-42 Նախագահ՝ Հ. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«14» «03» 2023 թ.
N ՄՇԴ-142-2023 պայմանագրի

ԾՐԱԳԻՐ

«Ոսկե ծիրան» միջազգային 20-րդ կինոփառատոնի իրականացման

1	Կազմակերպության անվանում	Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Ք. Երևան, Մոսկովյան 3
3	Ծրագրի անվանում	«Ոսկե ծիրան» միջազգային 20-րդ կինոփառատոն
3.1	Բովանդակություն	Այս տարի՝ հուլիսի 9-ից 16-ը, կանցկացվի 20-րդ հոբելյանական «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը: Տարին խորհրդանշական է, քանի որ բացի փառատոնի համար հոբելյանական լինելուց, տոնվում է Հայկական կինոյի 100 ամյակը, և փառատոնի ծրագրերի զգալի մասը ուղղված է լինելու հայկական կինոպատմության հանրահռչակմանը և լուսաբանմանը: Փառոտոնի օրերին կցուցադրվեն հայկական ֆիլմեր, ինչպես մեր օրերից, այնպես էլ հայկական հարուստ կինոժառանգությունից՝ որոնց մի մասը հանդիսատեսին կներկայացվի վերականգնված ձևաչափով: Փառատոնի բովանդակային ուղղությունը, հիմնական և հատուկ ծրագրերը մշակված են և ներառում են՝ Տարածաշրջանային լիամետրաժ, Տարածաշրջանային կարճամետրաժ, Միջազգային մրցույթ, Համահայկական կինոհարթակ և Միջազգային մրցույթային ծրագրեր, ինչպես նաև նախատեսվում է հարյուրին հասնող միջազգային հյուրերի ներկայություն, թե՛ ներկայացուցչական, թե՛ ցուցադրական եւ թե՛ արտադրա-կրթական բոլոր ուղղությունների լիակատար գործարկում: Բացի հիմնական մրցութային և արտամրցութային ծրագրերից իրականացվելու են հայկական կինոյի 100 ամյակի հանրահռչակմանը միտված մի շարք միջոցառումներ՝ այդ թվում հետահայաց ցուցադրություններ, ցուցահանդեսներ, վարպետության դասեր, աշխատարաններ և այլն: Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հետ համատեղ կկազմակերպվի «Համո Բեկնազարյան 100+1» ցուցահանդեսը: Փառատոնի օրերին կանցկացվի Սամուել Խաչիկյանի 10

		ֆիլմերից բաղկացած հետահայաց ցուցադրությունը, որն առաջին անգամ հայկական լայն հանդիսատեսին կներկայացնի իրանահայ ամենանշանավոր ռեժիսոր Սամուել Խաչիկիանի փառահեղ ու բեղուն ժառանգությունը: Կիրականացվի հայկական ֆիլմերից GIF ձեւաչափով տեսողական հատվածների ցուցահանդես, որը թույլ կտա ստեղծագործ ու ժամանակակից մոտեցմամբ ներկայացնել հայկական ֆիլմերը և խթան կհանդիսանա, ֆրագմենտալ հատվածների միջոցով երիտասարդ սերնդին հաղորդակից դարձնելու հայկական ֆիլմերի հարուստ պատմությանը: Փառատոնը Պորտուգալիա-Հայաստան բարեկամության միության և «Գալուստ Գյուլբենկյան» հիմնադրամի հետ համագործակցությամբ կկազմակերպի նաև պորտուգալական կինոյի օրեր: Ծրագրում կներառվեն վերջին տարիների լավագույ ֆիլմերը, իսկ հանդիսատեսը հնարավորություն կունենա հանդիպել ռեժիսորներին: Ավանդույթին համապատասխան փառատոնի մեկնարկին, Շարլ Ազնավուրի հրապարակում կտեղադրվի Լև Ատամանովի պատվո աստղը: Փառատոնի ընթացքում ներկայացված կլինեն Հայաստանի պետական մշակութային քաղաքականության համար կարեւոր երկրներն ու տարածաշրջանները ներկայացնող հյուրեր: Տարածաշրջանային ծրագրերը միտված կլինեն հայկական կինոարտադրության միջազգայնացմանը՝ տոկոսային հարաբերակցությամբ ավելի մեծ մասնաբաժին կկազմեն հայկական ֆիլմերի ընդգրկվածությունը: Միջազգային մրցույթային ծրագրում նախատեսում ենք հայկական կինոարտադրության տվյալ տարվա լավագույն նմուշի ներկայացումը, ինչը հնարավորություն կտա միջազգային ժյուրիին ծանոթանալ հայկական կինոարտադրության լավագույն օրինակներին: Թողարկմանը ակնկալում ենք մոտ 10 դեսպանության եւ 5-ից ավելի միջազգային կազմակերպությունների ներգրավվածություն: Փառատոնի նախապատրաստական աշխատանքները կսկսվեն սույն թվականի մարտի սկզբից՝ փառատոնին

		լավագույն կերպով ներկայանալու նպատակով: Երեւանի քաղաքապետարանի հետ համագործակցությունը կշարունակվի: Նախատեսում ենք ավելի սերտ համագործակցություն եւ փառատոնի ավելի հստակ զուգաբանում Երեւան քաղաքի հետ, միեւնույն ժամանակ է՛լ ավելի ընդլայնելով փառատոնի մարզային ակտիվությունը: Թողարկման շրջանակում ներկայացված կլինեն 100-ից ավել ֆիլմեր ամբողջ աշխարհից՝ համաշխարհային առաջատար փառատոների լավագույն նմուշներից մինչեւ նոր ձայներ եւ բացահայտումներ, որոնց մի մասը կցուցադրվի փառատոնի ավրտից հետո՝ օգոստոս ամսվա ընթացքում: Նախատեսում ենք իրականացնել ավելի լայնամասշտաբ կրթական-արտադրական հարթակ՝ տարածաշրջանային ներգրավվածությամբ, ինչպես նաեւ համահայկական կինոհարթակի գործարկում, որը կծառայի որպես ցանց՝ ամբողջ աշխարհով մեկ սփռված հայ կինոգործիչների արդյունավետ փոխճանաչման եւ համագործակցության եզերերի որոնման համար: GAIFF Pro հարթակում ներկայացված կլինեն դեռ չավարտված հայկական կինոնախագծեր, որոնք միջազգային փորձագիտական հանձնախմբի կողմից կդիտվեն և կարժանանան համապատասխան մասնագիտական մեկնաբանությունների, իսկ լավագույնը՝ կստանա ավանդական << Վարչապետի մրցանակը: Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր՝ Ոսկե ծիրան միջազգային կինոփառատոնը հանդիսանում է պետության մշակութային քաղաքականության եզակի հաստատուն, շարունակական եւ ներկայացուցչական զենքերից մեկը՝ ունենալով հարուստ պատմական հենք եւ հաստատուն դեր եւ նշանակություն պետության մշակութային վարկի եւ իմիջի դիրքավորման հարցում:
3.2	Նպատակ	Կրկնակի հոբելյանական տարում իրականացնել Հայ կինոյի 100-ամյակին վերաբերվող մարտահրավերները՝ հայ կինոյի հետագիծը ցուցադրող համայնապատկեր ծրագրեր, ներկայացնել վերականգնված և ժամանակակից կինոյի լավագույն նմուշները, ինչպես նաև Ոսկե ծիրան կինոփառատոնի հոբելյանական թողարկմանը ընդգծել փառատոնի կայացումը, մշակութային քաղաքական կարևորությունը և դիրքավորումը:

3.3	Անցկացման ժամկետ	Մարտի 1- Օգոստոսի 31, 2023 թ. Բուն փառատոնը՝ Հուլիսի 9-16, 2023 թ.
3.4	Անցկացման վայր	Երևան, Հայաստան
3.5	Ակնկալվող արդյունքներ	Բարձրացնել հանրության իրազեկվածությունը հայ կինոժառանգության և ժամանակակից կինոպրոցեսների հանդեպ: Վերաիմաստավորել ժառանգությունը և ընդգծել ներկայիս հաջողությունները: Սահմանել փառատոնի դիրքավորման և տեսլականի նոր նշաձող 3-րդ տասնամյակի համար, որտեղ կընդգծվի փառատոնի տեսլականի 3 առաջնահերթությունները՝ 1) Տարածաշրջանայինությունը 2) Միջգիտակարգայինությունը 3) Կրթական-արտադրական կոմպոնենտի ընդլայնումը:
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Ցուցադրվող ֆիլմերի քանակ՝ 100-ից ավելի Հյուրերի քանակ՝ մոտ 100 Մասնակիցների քանակ՝ մոտ 200 Հանդիսատեսի քանակ՝ 12000-15000 Անդրադարձ տեղական մամուլում՝ մոտ 100 Անդրադարձ միջազգային մամուլում՝ մոտ 30 Հայկական ֆիլմերի և նախագծերի քանակ՝ մոտ 25 Սոց ցանցերի պաշտոնական էջերի առաջխաղացում:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
L.S.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ

ք. Երևան, Բայրոնի 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570018400480100 ՀՎՀՀ 01556218
Հեռ՝010-52-10-42

Նախագահ՝
Հ. Խաչատրյան
(ստորագրություն)
L.S.

Հավելված N 2
«14» «03» 2023 թ.
N ՄՇԴ-142-2023 պայմանագրի

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

«Ոսկե ծիրան» միջազգային 20-րդ կինոփառատոնի իրականացման ծախսերի

N	Ծախսատեսակների անվանումը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Գումարը, (հազար դրամ)
	1. Աշխատանքի վարձատրություն (ներառյալ հարկերը)*, այդ թվում՝				**15 220,0**
1.1	Փառատոնի նախագահ և պրոդյուսեր	ամիս	6	300 000	1 800,0
1.2	Գեղարվեստական տնօրեն	ամիս	6	250 000	1 500,0
1.3	Ֆինանսական համակարգող	ամիս	6	200 000	1 200,0
1.4	Միջազգային կապերի համակարգող	ամիս	6	200 000	1 200,0
1.5	Ծրագրերի տնօրեն և գլխավոր խորհրդատու	ամիս	6	200 000	1 200,0
1.6	GAIFF PRO ծրագրի համակարգող	ամիս	6	200 000	1 200,0
1.7	Միջազգային ծրագրերի համակարգող և գլխավոր խորհրդատու	ամիս	6	200 000	1 200,0
1.8	Մամուլի համակարգող	ամիս	3	180 000	540,0
1.9	Միջոցառումների համակարգող	ամիս	3	200 000	600,0
1.10	Գովազդային նյութերի դիզայներ	ամիս	3	180 000	540,0
1.11	Կամավորների համակարգող	ամիս	1	180 000	180,0
1.12	Մարքեթինգի և գովազդի համակարգող	ամիս	2	180 000	360,0
1.13	Ֆիլմերի ցուցադրման դահլիճների պատասխանատու	ամիս	2	140 000	280,0
1.14	Ֆիլմերի ցուցադրման ծրագրերի պատասխանատու	ամիս	2	180 000	360,0
1.15	Բացման և փակման միջոցառումների բեմադրիչ ռեժիսոր	միջոց.	2	180 000	360,0
1.16	Տրանսպորտի համակարգող	ամիս	2	180 000	360,0
1.17	Լուսանկարիչ	մարդ	1	180 000	180,0
1.18	Գնումների համակարգող	ամիս	2	180 000	360,0
1.19	Գրասենյակի պատասխանատու	ամիս	6	160 000	960,0
1.20	Փառատոնի ֆիլմերի ընտրողներ	մարդ	4	210 000	840,0
	2. Կազմակերպչական ծառայություններ, այդ թվում՝				**10 868,0**
2.1	Ֆիլմերի փոխադրում՝ ներբեռնման ծառայություն (9 ֆիլմ x 107333 դրամ = 966.0 հ.դ.)	ծառ.	1	966 000	966,0
2.2	Ֆիլմերի ցուցադրման հեղինակային իրավունքի ձեռքբերում	ֆիլմ	8	396 000	3 168,0
2.3	Կատալոգի խմբագրում, կազմում, էջադրում, սրբագրում, թարգմանում (125 էջ)	ծառ.	1	499 000	499,0
2.4	Ֆիլմերի տեքստերի թարգմանություն (750 էջ x 5800 դրամ=4350.0 հ.դ.)	ծառ.	1	4 350 000	4 350,0
2.5	Ֆիլմերի ենթագրերի տեղադրում (650 էջ x 2900 դրամ=1885.0 հ.դ.)	ծառ.	1	1 885 000	1 885,0
	3. Կեցության ծախսեր, այդ թվում՝				**6 386,1**

3.1	Հյուրանոց (միջին գին, 33 մարդ, միջինը 5 օր)	մարդ/օր	165	32 000	5 280,1
3.2	Սնունդ (32 մարդ, միջինը 5 օր)	մարդ/օր	160	6 913	1 106,0
	4. Մրցանակաբաշխություն, այդ թվում՝				3 000,0
4.1	Լիամետրաժ ֆիլմերի դրամային մրցանակ	մրց	1	1 500 000	1 500,0
4.2	Տարածաշրջանային ֆիլմերի դրամային մրցանակ	մրց	1	1 500 000	1 500,0
	5.Լեվ Ատամանով պատվո աստղի պատրաստման և տեղադրման ծառայություն Ազնավուրի հրապարակում, այդ թվում՝				**525,9**
5.1	Լատունից/արույր/ տարբեր չափսերի թիթեղ	կգ	20	6 300	126,0
5.2	Բազալտի մշակված քար (80սմ x 80սմ x 9սմ)	հատ	1	60 000	60,0
5.3	Լատունից աստղերի դետալների պատրաստում	դետալ	8	4 500	36,0
5.4	Լատունից տառերի կտրում հայերեն և անգլերեն	տառ	22	8 800	193,6
5.5	Տառերի մշակում և լատունից աստղի վրա զոդում	տառ	22	2 740	60,3
5.6	Լատունից աստղը բազալտի քարի վրա ամրացում	աստղ	1	30 000	30,0
5.7	Բազալտի աստղերի տեղափոխում և տեղադրում վերամբարձիչով	աստղ	1	20 000	20,0
	6. Դահլիճի վարձակալություն, այդ թվում՝				**1 500,0**
6.1	Հայաստանի կինեմատոգրաֆիստների միություն	օր	7	142 858	**1 000,0**
6.2	«Մոսկվա» կինոթատրոն	օր	4	125 000	**500,0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**37 500,0**
	ԱԱՀ*				**7 500,0**
	ԸՆԴԱՄԵՆԸ, ներառյալ				**45 000,0**

*** Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**

***** ԱԱՀ-ի գծով լրացուցիչ հարկացումները որպես հարկային պարտավորություն ենթակա են վճարման Կազմակերպության կողմից որպես ԱԱՀ, հակառակ դեպքում ենթակա են վերադարձման ՀՀ պետական***

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011033348 ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Հ. Հակոբյան

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան» ՀԿ
ք. Երևան, Բայրոնի 5

«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570018400480100 ՀՎՀՀ 01556218
Հեռ՝ 010-52-10-42

Նախագահ՝

Հ. Խաչատրյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 3
«14» «03» 2023 թ.
N ՄՇԴ-142-2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2023 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության գլխավոր հաշվապահ

_____ /_____/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

----------/----------/

(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N
«14» «03» 2
N ՄՇԴ-142 2023 պայմա

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2023 թ

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպ
նախարարության գլխավոր քարտուղար _____
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)
բովանդակային վարչության « » « » 2023 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2023 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

Գլխավոր քարտուղար՝

_____

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Տնօրեն՝

_____

ՀԱՎԵԼՎԱԾ N 5
« » «03» 2023 թ.
N ՄՇԴ- -2023 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ծրագիր 1056	Միջոցառում 11005	Կինեմատոգրաֆիայի ծրագիր												
Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեից, այդ թվում ըստ ամիսների (աճողական)												ԸՆԴԱՄԵՆԸ
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Այլ ընթացիկ դրամաշնորհներ	463900		0,0	3000,0	36000,0	36000,0	36000,0	36000,0	36000,0	45000,0	45000,0	45000,0	45000,0	45000,0
Ընդամենը			**0,0**	**3000,0**	**36000,0**	**36000,0**	**36000,0**	**36000,0**	**36000,0**	**45000,0**	**45000,0**	**45000,0**	**45000,0**	**45000,0**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության,մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վազգեն Սարգսյան 3
Կառավարական տուն N2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հաշիվ N 900011033348
ՀՎՀՀ 02698732
Գլխավոր բաժնետեր՝
Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Կ.Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
Կինոյի զարգացման «Ոսկե ծիրան»
ՀԿ
Երևան, Բայրոնի 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՀ 1570018400480100 ՀՎՀՀ 01556218
Հեռ՝010-52-10-42
Նախագահ՝
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կ.Տ.